# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N16

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<19>> հոկտեմբերի 2021թ. ք.Երևան

2021թվականի հոկտեմբերի 19-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 7 անդամներից նիստին մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Ա.Սիմոնյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ |
| Ա.Վարդանյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ |
| Ա.Ստեփանյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, պատասխանատու քարտուղար |
| Ա.Պապյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ |
| Տ.Գասպարյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային, ջրային օդային և օդային տրանսպորտի քաղաքականության վարչության երկաթուղային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Ռ.Այվազյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ |
| Ն.Թևոսյան | Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ: |

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր հանձնաժողովի պատասխանատու քարտուղար՝ Ա.Ստեփանյանը:

# ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված 2 հայտերի քննարկում:
2. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

**1.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիաև լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտերի քննարկում**

Քննարկվեցին՝

<<ԷՅԵՄՋԻ ՄՈԹՈՐՍ>>ՍՊԸ-ի 2021թվականի հոկտեմբերի 5-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին և <<ԱՐԱԲԿԻՐ ՏԵԽԶՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ>> ՍՊԸ-ի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի հայտը, հոկտեմբերի 8-ին և 18-ին ի լրումն ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա.Ստեփանյանը ներկայացրեց <<ԷՅԵՄՋԻ ՄՈԹՈՐՍ>>ՍՊԸ-ի 2021 թվականի հոկտեմբերի 5-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին և <<ԱՐԱԲԿԻՐ ՏԵԽԶՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ>> ՍՊԸ-ի 2021 թվականի սեպտեմբերի 24-ի հայտը, հոկտեմբերի 8-ին և 18-ին ի լրումն ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:
Հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանի հանձնարարությամբ հանձնաժողովի անդամներ Ա. Պապյանը, Տ. Գասպարյանը և Ա. Ստեփանյանը 2021 թվականի հոկտեմբերի 15-ին նշված կազմակերպությունների

կողմից ներկայացված արտադրական տարածքում իրականացրել են հայտերում և կից փաստաթղթերում ներկայացված տվյալների համապատասխանության ուսումնասիրություն: Հանձնաժողովի անդամներ Ա. Պապյանը, Տ. Գասպարյանը և Ա. Ստեփանյանը պարզաբանեցին, որ կազմակերպությունների արտադրական տարածքներում առկա էին հայտին կից փաստաթղթերում ներկայացված սարքավորումները: <<ԱՐԱԲԿԻՐ ՏԵԽՉՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված արտադրական տարածքը 109,9 քմ. է, ունի լրացուցիչ 24,6, 3,9, 9,2, 2,8 քմ մակերեսով շինություններ: <<ԷՅԷՄ ՁԻ ՄՈԹՈՐՍ>>ՍՊԸ-ի արտադրական տարածքը 163,09քմ. է: Արտադրական տարածքներում առկա էին թվային տեսախցիկներ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ <<ԱՐԱԲԿԻՐ ՏԵԽՉՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված արտադրական տարածքի նպատակային նշանակությունը հասարակական է, իսկ ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետով տեխնիկական զննության կայանը արտադրական նշանակության շենք է, ուստի ներկայացված արտադրական բազան չի համապատասխանում սույն կարգի պահանջներին:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա.Ստեփանյանին:

Ա.Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| <<ԷՅԷՄ ՁԻ ՄՈԹՈՐՍ>>ՍՊԸ | 7կողմ,0դեմ |
| <<ԱՐԱԲԿԻՐ ՏԵԽՉՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ>>ՍՊԸ | 0կողմ,7դեմ |

Որոշեցին՝

<<ԷՅԷՄ ՁԻ ՄՈԹՈՐՍ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին ենթակա են լիցենզավորման:

<<ԱՐԱԲԿԻՐ ՏԵԽՉՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված արտադրական տարածքը չի համապատասխանում ՀՀ կառավարության 2007թ. փետրվարի 15-ի N690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի 2-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջին՝ ենթակա է մերժման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

**2.<<ՍԵԱՐՎԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության NSՄՏՉ 00015 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում**

Քննարկվեց՝

<<ՍԵԱՐՎԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև 2021 թվականի հոկտեմբերի 11-ին իլրումն ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության NSՄՏՉ 00015 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց <<ՍԵԱՐՎԻ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև 2021 թվականի հոկտեմբերի 11-ին իլրումն ներկայացված փաստաթղթերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության NSՄՏՉ 00015 լիցենզիայի թեթև տրանսպորտային միջոցների հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝Ա.Ստեփանյանին:

Ա.Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

| | |
|---|---|
| <<ՍԵԱՐՎԻ>>ՍՊԸ | 7կողմ,0դեմ |

Որոշեցին՝

հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի պահանջներին ենթակա են բավարարման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահ Ա.Սիմոնյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի պատասխանատու
քարտուղար Ա.Ստեփանյան